«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մանանա Մելքոնյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ. Մյասնիկյանի անվան 7 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ

ԳԼՈՒԽ 3 ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ներածություն

Արդի աշխարհում արժեհամակարգի հոգեվարք է . . .

Իսկ ի՞նչ է արժեհամակարգը :

Չկա այս հասկացության միանշանակ սահմանում :

Այն մեկնաբանվում է որպես մնայուն գործ, վերաբերմունք, վարքագիծ; Կյանքի սրնթաց ռիթմում հաճախ չենք նկատում այն գեղեցիկը, որ շրջապատում է մեզ,չենք կարևորում փոխհարաբերությունները,որոնցով երջանիկ ենք:

Կարևորում ենք, երբ կորցնում ենք . . .

Արժեքային կողնորոշումները ձևավորվում և փոփոխվում է կյանքի ընթացքում, տարիքի ու հանգամանքների բերումով ուստի անհրաժեստ է հենց դերահասության տարիքից ձևավորել կայուն արժեհամակարգ ;

Մանկավարժությունում արժեքը դիտարկվում է որպես բարոյական, գեղագիտական , հոգևոր , իմացական , մշակութային և էթնիկական նորմերի համախումբ , որն անհրաժեշտ է անհատի ներդաշնակ բազմակողմանի ձևավորման ու զարգացման համար Արժեհամակարգը , աշխարհի յուրօրինակ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Անհատի արժեքային համակարգը առավելապես և հիմնավոր ձեավորվում է հանրակրթության ոլորտում;

ՀՀ -ում այն արտահայտվաց է ՀՊՉ- ում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ յուրանքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրատվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում է նաև արժեքի ձևավորումը, որը պետք է տա դպրոցը

Իմ հետազոտական աշխատանքի թեման է

«Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագության դասավանդման ընթացքում»:

Թեման արդիական է, քանի որ կրթության նպատակը ոչ միայն սովորողներին գիտելիքներով զինելն է, այլև նրանց մեջ բարոյական ու ազգային հատկանիշներ

ձևավորելն է: Արժեքային կրթությունն ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է: Հայաստանում այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Թեմայի նպատակն է

- վեր հանել և վերլուծել այն խնդիրները,, որոնք առաջանում են սովորողների մոտ առարկայի դասավանդման ժամանակ արժեհամակարգ ձևավորելու ընթացքում որովհետև հայ աշակերտի արժեքային համակարգը խարխլված է, իսկ արժեքները՝ խեղաթյուրված:

Շրջանավարտներից շատերը այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, շփոթված են:Բարոյական իսկական արժեքի մասին թերհավատ են , և որպես արդյուք, իրենց ուղին ընտրելիս մեծամասամբ նյութապաշտ, են հետևում են << մոդայիկ>> մասնագիտություններին :

Իմ հետազոտության օբյեկտ են հանդիսանում աշակերտները, քանի որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարոյական , իր հայրենիքը ու ընտանիքը սիրող ,հայ ավանդական արժեքները գնահատող , հստակ դիրքորոշում և լայն աշխարհայացք ունեցող քաղաքացու դաստիարակությունն է ,ով բարեխղճորեն կծառայի հասարակությանն , իր հայրենիքին ,մեր ընդհանուր տանն՝ Երկիր մոլորակին

Արժեքային համակարգ ձևավորելու խնդիրներ են՝

. գաղափար տալ ազգային քաղաքակրթության առաջացման, զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին

. ծանոթացնել հայկական և համամարդկային արժեքներին ու նվաճումներին:

. ծանոթացնել հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

. ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ ու

. ստեղծագործ աշխատանքի՝ նրա բնածին ձգտումը:

. պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքերի մասին:

. հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները:

Արդի աշխարհաքաղաքական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը շատ դժվար է : Հանրակրթական դպրոցներում ուսուցանվող ցանկացած

ուսումնական բնագավառ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում իր մասնաբաժին ունի: Յուրաքանչյուր ուսուցչ, այդ թվում նաև աշխարհագրության, կանգնած է առարկայի ուսուցման ընթացքում արժեքային համակարգի ձևավորման բարդ խնդիրի առջև: Սովորողների անձի դաստիարակության պատասխանատու ու պարտավորեցնող առաքելություն է ։

ԳԼՈՒԽ 1 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կրթության հենքը ու իմաստը արժեհամակարգի ձեւավորումն է : Դպրոցը այն միջավայրն է , ուր հաստատուն են ավանդական ազգային նորմերը ու մնայուն արժեքները և աշակերտները ձգտում են դրանց համապատասխանել: Ժամանակակից դպրոցը հարկադրված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Հասարակությունում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար. նա պետք է զգա և ցավ , և ուրախություն , ունենա թե՛ դժվարություններ և թե՛ հաղթանակներ: Դպրոցը աջակցում է աշակերտին, օգնում ընկալել համակեցության նորմերի իմաստը և հիմնավորել իր վերաբերմունքը դրանց հանդեպ: Այդ ամենի արդյունքում ձևավորվում է իրական արժեքը, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները և կարմիր գրիչով ուղղված երազանքը ;

Աշխարհագրությունը հանրակրթական այն միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացումներ: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ: Աշխարհագրությունն է,որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին:

Ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորություններին, նյութական և հոգևոր մշակույթին արժեքներին,կենցաղի կազմակերպմանը:

Աշխարհագրությունն է սովորողին մղում ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփող աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք մի կողմից գոյություն ունեն մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև: Դրանով իսկ աշխարհագրությունն նպաստում սովորողի ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիությունը, բնության և

հասարակության փոխադարձ կապերը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Դպրոցական յուրաքանչյուր դասընթաց յուրովի է բացահայտում աշխարհայացքային այդ գաղափարները՝ ելնելով իր առանձնահատուկ բովանդակությունից:

Աշխարհագրությունն և՛ բնական, և՛ հասարակական ունի գիտական ճիշտ աշխարհահայացք ձևավորելու ներուժ, քանի որ ընդգրկում է բնական և հասարակական երևույթների լայն շրջանակ, ինչպես նաև բնական միջավայրի և հասարակության միջև գոյություն ունեցող կապերը տեսնելու , պատճառա-հետևանքային օրինաչափությունները վերլուծելու: Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է: Հողադնդում նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ:Այդ բաղադրիչներն էլ առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի ու տարածության մեջ:

Աշխարհագրության միջոցով տնտեսության, դրա ճյուղերի ուսումնասիրումն աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատանքային տարբեր գործունեության ոլորտներին, զանազան մասնագիտություններին:Հնարավորություն ստեղծում մասնագիրական ճիշտ կողմնորոշման և հասուն կյանքում իր տեղի հստակ գիտակցման:

Արդի աշխարհում ,ինպես նաև ՀՀ ում,դպրոցականներեռր մոտ գերադասվում է յուրացնող մոտեցումն ու դիրքորքշումը բնության հանդեպ :Այս կարծրքտիպը կոտրվում է երբ դասապրոցեսը կազմակերպվում է բնության գրկում՝ Դեբեդի հովտում, Լալվարի ալպյան մարգագետիններում: Առնչվելով բնության հետ երեխան սիրում է նրան,սովորում տեսնել ու գնահատել գեղեցիկը ,այն միջավայրը ,որտեղ ապրում է: Դպրոցում, դասաժամին առաջարկում եմ ունկնդրել Շոպենի ստեղծադործությունները երբ ուսումնասիրվում է <<Տարվա եղանակներ>> թեման հուզական ընկալման միջոցով կրկին ընդգծում եմ բնության հավերժությունը ու յուրատեսակությունը :

Հաճախ արտադպրոցական էքսկուրսիանները հենց այս նպատակով էլ կազմակերպվում եմ : Այսպիսով , երբ սովորողը անմիջական առնչվում է բնության հետ,փոխվում է իր աշխարհընկալումը :Նա հոգ է տանում և պաշտպանում բնությունը,սովորում գնահատել գեղեցիկը: Օրինակ երբ դպրոցամերձ տարածքում իրենց ձերքով պատրաստաց կերակրամաններ են դնում թռչյորնների համար և կերակրուն նրանց Աշծարհագրության դասաժամերին հաճախ կիրառում եմ աշխարհագրական

վայրերի անձնավորման միջոցները ,երբ կենդանանում է գետը,լեռը կամ անտառը օրինակ <<Ինչո՞ւ է աղմկում Դեբեդը>> կամ մեջբերվում է գրական ստեղծագործություն ։Նման առաջադրանքները նպաստում են հուզա-զգայական ոլորտի զարգացմանը ։

Մեծ է դպրոցական աշխարհագրության դերը բարոյա - գեղագիտական արժեքների ձևավորման գործում: Աշխարհագրական հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչընդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը միաժամանակ զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ: ։ Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրություն, մարդասիրություն, համակեցություն, փոխօգնություն , ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ: Դպրոցական աշխարհագրությունը իր ուրույն դերն է կատարում սովորողների այնպիսի ունակությունների զարգացման գործում, ինչպիսիք են դիտողականությունը, երևակայությունը, տրամաբանությունը, խոսքը, հիշողությունը: Սովորողները տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին երևույթները տեսնել համալիր ձևով, միաժամանակ նպաստում նրանց դիտարկողականության զարգացմանը: Այս առումով արժեքավոր են երկարատև դիտարկումները, որոնք շրջակա բնությունը և մարդու տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավորություն են տալիս համապատասխան հետևություններ կատարել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ: Աշակերտների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներ են համարվում պատկերավոր խոսքը,երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով ,դերային շարադրությունները և այլն: Քարտեզների միջոցով տարբեր տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարումը սովորողների մոտ զարգացնում են տրամաբանական մտածողության այնպիսի կողմեր, ինչպիսիք են ապացուցելիությունը, դատողության հատկությունը, ճիշտ մտահանգումներ կատարելու կարողությունները: Մտածողության զարգացումը կապված է աշակերտի խոսքի զարգացման հետ: Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների, թվերի ու փաստերի հետ՝ զարգանում է աշակերտների հիշողությունը: ՀՊՉ -ով սահմանվում է որ սովորողը պետք է ճանաչի իր հայրենիքը, թվարկի նրա խոշոր քաղաքները, լճերը,

գետերը, լեռները, իմանա իր բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները: Աշխարհագրական գիտելիքների հիման վրա հնարավոր է ձեռք բերել հետևյալ կարողություններն ու հմտությունները.

- դիտարկել և նկարագրել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները, վերլուծել մարդ – բնություն կապ
- օգտվել որոշակի սարքերից (կողմնացույց, ջերմաչափ, ճնշաչափ),
- խորհրդակցել համադասարանցիների հետ,
- համատեղ մշակել և իրականացնել բնապահպանական պարզ միջոցառումներ:

Աշխարհագրության յուրաքանչյուր դասաժամին անդրադարնում ենք մարդու և բնության ներդաշնակ կապին : էկոլոգիական խնդիրները դիտարկում ենք 3 մակարդակով գլոբալ ռեգիոնալ և տեղական; Աշակերտն աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ու արդյունքում սիրում է բնությունը, գնահատում բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք դրսևորում կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ, ճանաչում մարդ-բնություն կապը, , ճանաչում իր երկրի և աշխարհի բնությունը և նրա յուրահատկությունները: Ինչպես կարելի է ուսումնասիրել Լոռու մարզը առանց Թումանյանի

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց

ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝

Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ

Հայացքով իրար նայում են հանդարտ:

Աշխարհագրությունն լայն հնարավորություն է էսթետիկ արժեքներ դաստիարակելու առումով :Դասաժամերին հաճախ ցուցադուում եմ պրեզենտացիաներ Վերածննդի դարաշրջանից և սովորողներին առաջարկում բանավիճել ցուցադրված նյութերի շուրջ, վիրտուալ ճանապարհ ենք անցնում աշխարհի պետություններով համամատելով Հայաստանի հետ : Անդրադարնում ենք անիմացիոն ֆիլմերին : Երեխաները մեկը մյուսին ընդատելով օրինակներ են բերում բնական զոնաներից (<<Մաուգլի>> մ-ֆ,<< Բժիշկ Այբոլիտ>> <<Մադագասկար>>):Հենց իրենք սիրով պատրաստում են սահիքներ համալրելով գրական ,երաժշտական ,պատկերավոր օրինակներով ,միաժամանակ զարգացնելով անձնական հոգևոր աշխարհը:

Հարկ է նշել ,որ նման բնույթի առաջադրանքները գրավում են իրենց: Սովորողները ակտիվ մասնակցում են քննարկմանը

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը զարգանում համընդհանուր ներառմամբ

համատեքստում: Կրթության առաքելությունն ամփոփվում է հետևյալ առաջնահերթ նպատակներում.

- լայն տեսահորիզոնով ստեղծագործ անձի դաստիարակություն՝ մտավոր, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության միջոցով.
- աշակերտների այնպիսի դաստիարակություն, որը նրանց կդարձնի ազատ և անկախ, ունակ՝ ինքնուրույն քննարկելու և պատասխանատվությամբ կատարելու իրենց պարտականությունները.
- դաստիարակություն՝ հիմնված հումանիզմի համընդհանուր սկզբունքների վրա՝ պահապանելով սեփական մշակույթը և հարգելով այլոց մշակույթների յուրահատկությունները:

Հենց այս գաղափարների վրա է տեղի ունենում աշխարհագրության դասավանդման դերի արդիականացումը: : Դաստիարակությունն այսօր ընկալվում է որպես երեխայի և մեծահասակի նպատակաուղղված փոխգործակցություն, որը նախատեսում է նրանց համատեղ գործունեությունը՝ դաստիարակվողի կողմից հասարակության մշակութային արժեքների յուրացման և նրա անձի ինքնաիրացման նպատակով: Այս սահմանման մեջ ընդգծվում են դաստիարակության հետևյալ առանձնահատկությունները.

- մանկավարժների և աշակերտների միջև սուբյեկտ-սուբյեկտ հարաբերության անհրաժեշտությունը.

- ուղղվածություն դեպի երեխայի հոգևոր-բարոյական զարգացումը, մարդկության մշակութային արժեքների ըմբռնումը և դրանք որպես սեփական արժեհամակարգի մասի ձևավորումը.

- զարգացման և ինքնաիրացման գործընթացում դաստիարակվողի կենսափորձի վրա հիմնվելը.

- զգացմունքները անձի արժեքային-մոտիվացնող կողմ դարձնելը, որը խթանում է նրա գործունեությունը և վարքը.

- դաստիարակվողի անհատական հաջողությունների նշանակությունը դաստիարակության արդյունավետացման մեջ:

Հոգևոր-բարոյական զարգացումը սոցիալականացման, արժեքային համակարգի ձևավորման գործընթացում անձի արժեքային-իմաստային ոլորտի հետևողականորեն ընթացող ընդլայնումն է և ամրակայումը, մարդու ընդունակության ձևավորումը՝ գնահատել և գիտակցորեն կանգնել ավանդական բարոյական նորմերի և բարոյական իդեալների աայնպիսի հիմքի վրա ինքն իր, ուրիշ մարդկանց, հասարակության, պետության, հայրենիքի, ամբողջությամբ վերցրած՝ աշխարհի հանդեպ վերաբերմունքում և հարաբերություններում: Կրթության մեջ աշխարհագրության մասնագետի կողմից սովորողների հոգևոր-բարոյական դաստիարակության և սոցիալականացման նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը: Նպատակը մասնատվում է խնդիրների, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը: Դպրոցի սովորողների դաստիարակության և արժեքային համակարգի ընդհանուր խնդիրները դասակարգված են առանձին ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրը քանի որ սերտորեն կապված է մյուսների հետ, բացահայտում է ՀՀ քաղաքացու հոգևոր-բարոյական զարգացման մի էական կողմ.

- քաղաքացիա-հայրենասիրական դաստիարակություն,
- հոգևոր և բարոյական դաստիարակություն,
- ստեղծագործականության և աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի դաստիարակություն,
- մտավոր դաստիարակություն,
- առողջարարական դաստիարակություն,
- սոցիալ-մշակութային և միջմշակութային դաստիարակություն,
- ընտանեկան արժեքների դաստիարակություն,
- հաղորդակցական մշակույթի ձևավորում,
- էկոլոգիական դաստիարակություն:

Այս խնդիրների բացահայտման և լուծման ուղղիների միջակայքում անգնահատելի մեծ է աշխարհագրության դերը: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա

ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացքը, երևույթների միջև եղած կապերի պատճառականությունն և աշխարհի միասնականության համոզմունքը : Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների սովորություններին , նյութական և հոգևոր մշակույթին; Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու ինք իրեն, իր էթնիկական պատկանելությունը , հասկանալու և գնահատելու իր տեղն ու դերը աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի արժեքային համակարգի ձևավորման և դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ: Մեծ է աշխարհագրության դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում:: Վերջինս հատուկ կարևորվել է հանրակրթության արդի բարեփոխման ռազմավարական խնդիրներում:

Աշխարհագրական հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչընդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը և առողջությունը, միաժամանակ, զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ: Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռնում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրության, մարդասիրության, համակեցության, փոխադարձ հարգանքի, իրար օգնելու մարդկային բարձրարժեք գծեր, ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ: Դպրոցական աշխարհագրությունն իր ուրույն դերն է կատարում սովորողների այնպիսի ունակությունների զարգացման գործում, ինչպիսիք են դիտողունակությունը, երևակայությունը, տրամաբանությունը, խոսքը, հիշողությունը:

ԳԼՈՒԽ 3 ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

Այժմ դասի օրինակով ներկայացնեմ, թե ինչպես են աշակերտների մոտ ձևավորվում բնության նկատմամբ, բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանության ու վերականգնման կարևորությունը: Դա լավագույնս ստացվում է «Հայաստանի աշխարհագրություն» դասընթացի « Լոռու մարզ» թեմայի ուսուցման ընթացքում: Քանի որ ծանոթ են իրենց տարածաշրջանի՝ իրենց ապրելատեղի ռելիեֆին , կլիմային, հողաբուսական ծածկին, մարդածին լանդշաֆտներին, ոռոգովի հողատարածքներին և, ինչու չէ, այն հիմնախնդիրներին, որոնք առաջացնում են և հետագայում էլ կառաջացնեն մեծ չլուծվող խնդիրներ: Ուստի,ճանաչելով, խորապես ուսումնասիրելով իրենց տարածաշրջանի արժեհամակարգերը՝ կկարողանան հետագայում չկանգնել այնպիսի խնդիրների առաջ, ինչպիսիք են քաղցրահամ ջրերի աղտոտման հիմնախնդիրները,(Դեբեդ դետի օրինակով ,նրա հովտում ոռոդման հիմնածնդիրների բացայտման և կենցաղում ջրոգտագորխման հարցերի քննարկմամբ), սակավ բնական հողային ռեսուրսների պայմաններում կկարողանան զարգացնել գյուղատնտեսության ինտենսիվ ուղղությունը՝ ստեղծելով ջերմոցային տնտեսություններ, առաջարկելով հակակարկտային կայանների հիմնադրում և շահագործում: Այսինքն՝ դաստիարակել այնպիսի ապագա քաղաքացի, որ ծանոթ լինելով, իմանալով իր բնակավայրի խնդիրները, կարողանա ճիշտ կազմակերպել իր տնտեսությունը՝ ամուր կանգնելով իր հայրենի հողի վրա, որը կնպաստի բնակչության՝ դեպի մայրաքաղաք տեղաշարժի, ինչպես նաև արտագաղթի կանխմանը: Արժեհամակարգի ձևավորում իրականացնում եմ յուրաքանչյուր դասաժամին

ՀՊՉ համաձայն՝ հիմնական դպրոցի հիմնական նպատակը սովորողին մասնագիտական կրթության նախապատրաստելն է, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ուսուցումը: <<Աշխարհագրություն>> դասընթացի առջև դրված են բարդ ու բազմազան ուսումնադաստիարակչական հիմնախնդիրներ որոնք պետք է ապահովեն սովորողների մոտ

1. Աշխարհագրական մտածողությունը
2. Աշխարհայացքի ձևավորումը

3. Համամշակութային արժեքների ճանաչումը

4. Կրթաճանաչողական ունակությունների զարգացումը

5. Ստացած գիտելիքների գործնական կիրառումը

6. Հայրենասիրության դաստիարակությունը, ազգային մտածողությունը

7. Հումանիզմի դաստիարակությունը

8. Բնօգտագործման և բնապահպանության ճիշտ մտածողության ձևավորումը

Դպրոցում կարևորագույն խնդիր է սովորողների աշխարհագրական մտածողության աշխարհայացքի ձևավորման հիմքեր դնելը: Սովորողների աշխարհագրական գիտելիքների հարստացման նպատակով հանրակրթական դպրոցում կարևորվում է աշխարհագրության `ամբողջական, կառուցողական գիտություն լինելն ու նրա զարգացման արդի միտումները ներկայացնելը, ինչպես նաև գիտական հետազոտության ամենահատկանշական մեթոդներին, աշխարհագրության յուրահատուկ գիտական լեզվին՝ քարտեզին , առավել խորությամբ ծանոթացնելը:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է ձևավորվի այնպիսի արժեքային համակարգ, որ սովորողի համար աշխարհը ճանաչելի դառնա, միասնական, ամբողջական , բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվեն սերտ կապի մեջ և փոփոխվեն ժամանակի ու տարածության մեջ:

Աշխարհագրությունն սովորողին հնարավորություն է տալիս համամոլորակային ընդգրկում ունեցող բնական և հասարակական տարրերն ու երևույթները ճանաչելու միջոցով հասկանալ և արժևորել հայրենիքի տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարած աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

· Աշակերտը, ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ, պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունքը ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ :

· Դպրոցն ավարտող աշակերտը որպես արժեքային համակարգի տարրեր պետք է պարտավորություն կրի բնության, հասարակության, սեփական անձի հանդեպ, ըմբռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը:

Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներն են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով երկրի առանձին տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը համապատասխան քարտեզներով և նկարներով: Աշխարհի 231 պետությունների մեջ մեր իմանա մեր փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը ընկալի նրան որպես համայն հայության հայրենիք, քանի որ բացի մեր բուն հայրենիքից ունենք նաև սփյուռք: Այդ է պատճառը, որ հատկապես հայ աշակերտի, հայ մարդու, հայի արժեհամակարգը պետք է տարբերվի աշխարհի մյուս ժողովուրդների մտածելակերպից: Այդ պատճառով, Հայաստանի աշխարհագրության խորը իմացությունը յուրաքանչյուր հայի նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի, հայրենի ժողովրդի պատմության և մշակույթի իմացությունը: Եթե ուսուցիչը լավ է սերմանում այդ գիտելիքը, ապա այդ իմացությունը կօգնի յուրաքանչյուր աշակերտի ճիշտ գնահատել նաև մեր հայրենիքի զարգացման հեռանկարները և իրական հնարավորությունները, ճիշտ կողմնորոշվել համաշխարհային և տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին: Իսկ դա կարող ենք իրականացնել միայն խորապես ճանաչելով և արժանվույն գնահատելով Հայաստան աշխարհը, սիրելով այն և նվիրվելով նրա հզորացման ու բարգավաճման վեհ նպատակին: Այսպիսով, ամփոփելով իմ հետազոտական աշխատանքի թեման՝ եկա այն եզրակացության, որ պետք է դաստիարակել հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվության ու հպարտության, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու Հայոց

բանակին ծառայելը պատվի գործ է: Առաջարկում եմ հասնել այն բանին, որ շրջանավարտը՝ Աշխարհի վաղվա քաղաքացին ,գիտակցի իր անմիջական ներդրման անհրաժեշտությունը համամոլորակային ,տարածաշրջանային և ռեգիոնալ հիմնախնդիրների լուծմանը:,Վերադարնա հայ ավանդական արժեքներին, շարունակի անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման գործ: Քանզի, ինչպես ասել է մեծն Ռաֆֆին՝ «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1, https://escs.am/am

2, https://www.arlis.am/documentview - Հանրակրթական պետական չափորոշիչ

3. Ефимов, С.И. Художественная и научно-популярная литератур на уроках физической географии /С.И. Ефимов// География в школе. – 2004. - №6.-С. 69-73.

4,Սուխոմլինսկի Վ. Ա. , «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977թ. , էջ 317

5, Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др. М., 1978, стр. 452